«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2014թ. սեպտեմբերի 17-ի նիստում

արձանագրություն № 5

ԵՊՀ ԻՄ տնօրեն [illegible] ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսական մասը (այսուհետև Տնտեսական մաս) մասնաճյուղի առանձին կառուցվածքային ստորաբաժին է, որը գործում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, Վարչատնտեսական վարչության և սույն կանոնադրությանը

1.2. Տնտեսական մասը կարող է վերակազմավորվել կամ լուծարվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ՝ մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի որոշմամբ:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Տնտեսական մասի հիմնական խնդիրներն են՝

ա/ իրականացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և նրա առանձին ստորաբաժանումների տնտեսական սպասարկման աշխատանքների ղեկավարումը.

բ/ ապահովել մասնաճյուղի տնտեսական գույքի պահպանությունը, դրանց վերականգնումը և համալրումը, ինչպես նաև մասնաշենքերի (շինությունների) և դրանց հարող տարածքների մաքրությունը,

գ/ հետևել մասնաճյուղի մասնաշենքերի տեխնիկական և սանիտարական վիճակին և միջոցներ ձեռնարկել դրանց ժամանակին վերանորոգման համար,

դ/ մասնաճյուղի վարչական և ուսումնական ստորաբաժանումներին, համաձայն ներակայացվող պահանջի ապահովել գրասենյակային և այլ պարագաներով ու գույքով, ինչպես նաև առօրյա տնտեսական ապրանքներով,

ե/ մասնաշենքերը ջեռուցման ժամանակաշրջանում, ամենօրյա ուշադրության և հսկողության տակ է պահում 2 ջեռուցման կաթսայատների աշխատանքը և հսկում դրանցում անվտանգության կանոնների պահպանության գործընթացը,

զ/ մասնաճյուղում անվտանգության տեխնիկայի ժամանակակից միջոցների ներդրումը և աշխատանքի անհրաժեշտ սանիտարահիգենիկ պայմանների ստեղծում,

է/ համաձայն մասնաճյուղի տնօրենի հրամանի կազմակերպում է նյութական արժեքների գույքագրում, իսկ առանձին դեպքերում տնօրենին ներկայացնում առաջարկություն բարոյապես և տեխնիկապես մաշված գույքի դուրս գրման համար,

ը/ աշխատանքային փոխադարձ կապ է պահպանում տարածքի ջրամատակարարման, կոյուղու, կոմունալ, էլեկտրոսպասարկման և մյուս շահագրգիռ ծառայությունների հետ և ձեռնարկում միջոցառումներ նշված ծառայությունների վթարային դեպքերը շտկելու ուղղությամբ,

թ/ հայտնաբերում և մասնաճյուղի տնօրինությանն է ներկայացնում մասնաշենքերի տեխնիկական և ընդհանուր վիճակներում տեղ գտած թերությունները և միաժամանակ ներկայացնում նախահաշիվներ դրանց ընթացիկ վերանորոգման համար:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2.1. Տնտեսական մասը անմիջականորեն ենթարկվում է մասնաճյուղի տնօրենին:

2.2. Տնտեսական մաս ղեկավարում է բաժնի վարիչը, ում աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է մասնաճյուղի տնօրենը:

2.3. Տնտեսական մասի աշխատակազմի մեջ մտնում են.

- ինժենները
- 4 պարետները
- անվտանգության ծառայության ղեկավարը
- պահեստապետ-գործակալը
- վարորդ, պահակապետը
- վարորդ, փականագործը
- հյուսնը
- տեխնիկը
- փականագործը
- 5 գիշերապահները
- 2 բանվորները
- 12 հավաքարարները

2.4. Տնտեսական մասի վարիչը՝

ա/ կազմակերպում, ծրագրում, համակարգը ղեկավարում և վերահսկում է բաժնի ընթացիկ գործունեությունը,

բ/ ապահովում է բաժնի հիմնական խնդիրների և գործառույթների իրականացումը, լուծում է դրանից բխող հիմնախնդիրները, բաժնի աշխատակիցներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, որոնք նրանց կողմից ենթակա են պարտադիր կատարման,

գ/ կատարում է աշխատանքի բաժնում բաժնի աշխատողների միջև,

դ/ ստորագրում է բաժնի կողմից պատրաստվող փաստաթղթերը, առանձին դեպքերում նախապատրաստում է զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ և այլ փաստաթղթեր,

ե/ մասնակցում է տնօրենի կողմից հրավիրված նիստերին և խորհրդակցություններին,

զ/ առաջարկություններ է ներկայացնում մասնաճյուղի տնօրենին բաժնի աշխատակիցներին սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ատեստավորելու և վերապատրաստելու վերաբերյալ: